<u>Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր 02</u>
16. մայիսի 2017թ. կնքված N ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02-9 պետական գնման պայմանագրի
<u>Փոփոխություն N 2</u>

*ք. Հրազդան* *27 դեկտեմբերի 2017թ.*

<<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանը>>, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Լ.Պետրոսյանի, որը գործում է <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի>> կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<Ոսկանյանշին>> ՍՊԸ**-ն, ի դեմս Ընկերության **տնօրեն Ն.Ոսկանյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 16 մայիսի 2017թ. կնքված N ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02-9 պետական գնման պայմանագրի 8.4 կետը և Գնումների գործընթացի կազմակերպման մասին Հայաստանի Հանրապետության 10 փետրվարի 2011 թվականի N168-Ն որոշումը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1. *Համաձայնագրի առարկան***

Կողմերը որոշեցին.

1.1 Կողմերը ֆիքսեցին, որ Ձորաղբյուրի համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգման աշխատանքների համար նախատեսված 4857600 (չորս միլիոն ութ հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր) դրամից մինչև 19 դեկտեմբերի 2017թ-ը. որպես կատարողական ներկայացվել է 2450588 (երկու միլիոն չորս հարյուր հիցուն հազար հինգ հարյուր ութսունութ) դրամ և համաձայն 16 մայիսի 2017թ. կնքված N ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02-9 պետական գնման պայմանագրի 4.6 կետի վճարվել է 2328058 (երկու միլիոն երեք հարյուր քսանութ հազար հիսունութ) դրամ ենթակա է կատարման 2407012 (երկու միլիոն չորս հարյուր յոթ հազար տասներկու) դրամի աշխատանքներ, նախատեսվում է կանխավճար կապալառուին չվճարված 2529541 (երկու միլիոն հինգ հարյուր քսանինը հազար հինգ հարյուր քառասունմեկ), որից 242880 (երկու հարյուր քառասուներկու հազար ութ հարյուր ութսուն) դրամը համարվում է աշխատանքների դիմաց համաձայն պայմանագրերի 4.6 կետի չվճարված 5 տոկոսի գումար:

1.2 Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

1.3 Ուժը կորցրած ճանաչել 16 մայիսի 2017թ. կնքված N ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02-9 պայմանագրի 19 դեկտեմբերի 2017 թվականի N1 համաձայնագրի 1.3 և 1.4կետերը:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժան մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

***3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| <<ՀՀ Կոտայքի մարզ ք. Հրազդան Կենտրոն վարչական շենք>> | <<Ոսկանյանշին>> ՍՊԸ |
| Հ/Հ <<900001059444>> | ՀՀ Կոտայքի մարզ գ.Եղվարդ Գայի 30 |
| ՀՎՀՀ 03014577 | Հ/Հ 2473700990840000 |
| | <<Արդշինբանկ>> ՓԲԸ Նաիրիի մ/6 |
| | ՀՎՀՀ 03309315 |
| --------------------------------- (ստորագրություն) | --------------------------------- (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |